

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:
Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աննպատակ խնջոյքներ:—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Աւարտ-Ունգարիա: Անգլիա: Նիդերլանդ: Նամակ խմբագրին: Արտաքին լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱՅԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Կաթօրիկ հայեր նոր գրաւած նախնայնորդներ:

ԱՆՆՊԱՏԱԿ ԽՆՋՈՑՔՆԵՐ

Մեր վաճառականները վրդովել են այն լուրով, որ մենք տպել ենք «Մշակ» մէջ, թէ նրանք հաւաքելով իրանց մէջ մօտ 1000 ռուբլ գիտաւորութիւն ունեն գործ դնել լուրեր, որ մենք տպել ենք: Մենք այն կարծիքն ենք յայտնում որ աւելի լաւ կը լինէր այդ հաւաքված գումարը գործ դնել մի որ և է ազգային, բարենպաստական ձեռնարկութեան վրա:

Բայց «Մշակ» հետեւեալ համարներէն մինում մենք աւելացրինք, որ մենք մինչև անգամ քեզի դէմ չենք, միայն կուզենայինք տեսնել մեր հասարակութեան մէջ, որ աւելի քաղաքակիրթ հասարակութիւնների պէս մեր հայերն էլ վերջապէս հասկանային թէ քեզն էլ խնջոյքն էլ չը պէտք է լինի մի աննպատակ, վայրենի գաւառներին, այլ նա էլ պէտք է առաջնորդված լինի մի որ և է բարոյական գաղափարով:

Մեր նպատակը չէ այստեղ խօսել ընտանեկան խնջոյքների, ընտանեկան քեզների մասին, թէ և որանք էլ բարեկիրթ հասարակութիւնների մէջ երբեք աննպատակ չեն լինում: Գարծեալ մի բարոյական, թէ և ներքին տանեկան գաղափար կայ, երբ ընտանեկան շրջանը իր ազգականներով ու ծանօթներով, հաւաքվում է, խնջոյք է սարքում մի հարսանիք, ծննդեան օր, կամ ընտանիքի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱԹՈՒԿԱ ՀԱՅԵՐԸ ՆՈՐ ԳՐԱՒԱԿԱՆ ՆԱԶԱՐԳՆԵՐՈՒՄ

Որովհետեւ նոր գրաւած Բաթումի և Կարսի նահանգներ ալ այսուհետեւ մի մարմին են կազմել Կաթոլիկ հետ, ուստի հարկ է որ Կաթոլիկ հայք ևս լիովին ծանօթանան իրենց նահանգների մէջ բնակվող ազգայնոց հետ: Ո՛վ կարող է այս փոխադարձ ծանօթացման միջոց լինել, եթէ ոչ մասնաւոր: Եւ քանի որ «Մշակ» լրագիրը, բացի այն գործարար պատճառէ որ ամենին շատ է տարածված մեր մէջ, այլ նաև ճշմարիտ ազգային է, այսինքն առանց կրօնի խտրութեան հասարակական ամեն հայի կրթիչ գործող և լրատուն է, ուստի ևս ալ նորա միջոցաւ ահա կաշխատում ծանօթացնել Կաթոլիկ ազգայիններ Բաթումի և Կարսի նահանգների մէջ հայ-կաթոլիկացի ուսումնարանների, հոգևորականների և ինտելիգենցիայի հետ:

Ա. Ուսումնարաններ

Բաթումի և Կարսի նահանգները կը կազմեն Արդուինի եպիսկոպոսական ընդհանուր թիւը: Հայ-կաթոլիկ կղեր հոս մեծ ազդեցութիւն ունի ժողովրդեան վրա: Թէ եկեղեցիներին, թէ ազգային կաթոլիկների և թէ ուսումնարանների տեսչու-

քի մի անդամի տարեգործի օրը տօնելու համար:

Բայց ոչինչ չը կայ այնքան զուգելի, որ քան հասարակական մեծ գումարումներ, խնջոյքներ, քեզներ, որոնք գուրկ լինելով մի որ և է բարոյական գաղափարով, նպատակ ունեն միմյանց փող վատնել կեր ու խումբ վրա և անցնում են միմյանց անմիտ կեանքի և քրոջի գոռոցներով:

Քանի հասարակութիւնը քաղաքակիրթ-վում, լուսաւորվում է, քանի նրա մտաւոր ու բարոյական կեանքը զարգանում, քանի նրա բարք ու վարքը մեղմանում են,—այն քան նրա քեզներն ու խնջոյքները ստանում են մի բարձր բարոյական նշանակութիւն:

Որքան զուգելի են ամբողջ աննպատակ գումարումներ, զրդոված վայրենի քեզի, կեր ու խումբ միակ ցանկութեամբ, այնքան համակրելի ու յարգելի են ամբողջ խնջոյքները, երբ նրանք առաջնորդված են լինում մի որ և է բարոյական գաղափարով:

Եւրօպայում ժողովրդական խնջոյքներ, կամ ստորագրութեամբ ծաշկերոյթներ միշտ մի որ և է բարոյական գաղափարով են առաջնորդվում: Մի տեղ ամբողջ հաւաքվում է իր մի որ և է պատմական ազգային տօն տօնելու համար, միւս տեղ ամբողջ երկրից հաւաքված երգեցիկ խմբեր տօնախմբութիւն են անում: մի այլ տեղ մարմնամարզական տօն է լինում և այլն: Ստորագրութեամբ ծաշկերն էլ, ոչ թէ միայն ինտելիգենցիայի, բայց և ամբողջ մէջ միշտ տեղի են ունենում մի որ և է բարոյական նպատակի համար: Մի տեղ տօնում են մի հիմնարկութեան տարեգործը, մի այլ տեղ մի նշանաւոր մարդուն պատիւ են անում նրան ծաշ տալով և այլն:

Եւ մեզնում ծաշկերոյթի ամբողջ նշանակութիւնը պարունակվում է շատ ուտե-

թիւն մանաւանդ թէ ուսուցչութիւնն իսկ հոգեւորականների ձեռքն է: Ուստի, ևս հարկաւորում եմ ուսումնարանների միջակը թիւի հոգեւորական կազմակերպութեան կարգաւ նկարագրել: Արդուինի թիւական քաղաքը: Մեծ և փոքր վիճակներն ասուք են: Կարս, Արդան, Օլթի, Արդանու, և Բաթում քաղաքներ և Սաթլի, Տաննու, Գիւլ, Կուր, Մամանլիս գիւղերն: Արդան, Օլթի և Բաթում քաղաքների հայ-կաթոլիկներ թէ և թոշակաւոր առաջնորդ քահանայներ ունեն, սակայն ուսումնարանի գլուխ են, վասն զի գրեթէ ամեն ալ օտարաբաղադրացիք են որ հոս վաճառականութիւն կանեն և արհեստ կը բանեն: Իսկ միւս տեղերն կայ ուսումնարան: Սկսեմք նախ Կաթոլիկոսանիստ քաղաքէն:

ա) Արդուին քաղաքն, որ ըստ նորագոյն պաշտօնական տեղեկութեան 3,500 հայ-կաթոլիկ կը պարունակէ, չորս գլխաւոր բաժանումներ ունի, որ են: Միջնաքաղաքն և խալիկէ, Կօրօսո և Կործու թաղերը: Այս չորս բաժանումների մէջ ալ կայ մի մի եկեղեցի և եկեղեցւոյն կից ուսումնարաններ: Եպիսկոպոսարան, մայր եկեղեցին և մայր ուսումնարան Միջնաքաղաքի մէջ են: Մայր ուսումնարան երկու կարգէ բաժանված վերին և ստորին: Ստորին կարգի մէջ խաւն ի խաւն լեցուած են 100-էն աւելի երեխաներ, որոնց մանկավարժ-ուսուցիչներն են մի կամ երկու տիրացուներ: Վերին կարգի մէջ կան 50 աշակերտներ, որոնք ստորին կարգի զարգացեալներն են ընտրուած, և կը կառավարվին մի կամ երկու քահանայէ: Մի զարմանալի, ընթերցող, մի կամ եր-

բում շատ խմբում և բաւելում, այն ինչ Եւրօպայում այն ծաշը, որով հասարակութիւնը պատուում է մի որ և է գաւառնաւոր-յին, վերլուծին, Հեւհօյցին, Գլաւստին, կամ տօնում է մի որ և է ազգային հիմնարկութեան տարեգործը, լինում է մեծ մասամբ շատ համեստ կերակուրների և զինու քաղաքական կողմից, բայց ճիւղ իր բարոյական գաղափարով և արտասանված ծանրութիւն:

Քաղաքակիրթ և կրթակիր հասարակութիւնների մէջ զանազանութիւնը նրա մէջն է նկատվում, որ վերջինը անսանձկան ինտելիգենցիան կեանքի նպատակ է համարում, իսկ առաջինը այդ ինտելիգենցիան աշխատում է միշտ ստորագրել մի որ և է բարոյական գաղափարի:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Վ. Աղուլիս, 20 ապրիլի
Յունիսի 31-ին կուշուք էր պ. Գ. Մնացականեանի տանը, ուր սեղանի վրա հայր Մեսրոպ Գուլումեանը առաջարկեց մի քանի տօնող հայ գործիչների կենացը: Երբ հերթն եկաւ Ե. Ներսէս պատրիարքին, պ. Պ. Աղամալեանը առաջարկեց ստորագրութիւն յանուն նորին սրբազանութեան Պարոնի առաջարկութեան համաձայն տէր հայրը մի քանի յորդորական աղոյս խօսեցրով հրաւիրեց ստորագրութիւն սկսել: Նոյն օրակէն ստորագրեցին պարոնայք և տիկնայք. գումարը հասաւ 167 ռուբլու: Յիշեալ գումարը ուղարկելով ձեռք խնդրում ենք հասցնել նորին սրբազանութեան, որը համաձայն իր կամաց գործ դնի ինչ ազգային կարեւորութեան կամենայ. այս ստորագրողաց ցանկութիւնն է: Եւ խնդրեմք ստորագրողաց անունները, եթէ կարելի է, տպագրել ձեր լրագրում, ստորագրողաց միամտութեան համար: Պարոնայք.

Կու անկուս վրա, վասն զի այսօր տիրացուն երկու է, բայց վաղը մէկը քահանայ կը ձեռնադրուի, կեղև և կը մնայ մին: Այսօր քահանայն երկու է, բայց վաղը Գերապայծառի մի կարգաւորութիւն կը հարկադրէ զինք թողուլ ուսուցչու թիւն և գնալ հոս ուր պաշտօնը կը կոչէ, ուր քահանայի հարկաւորութիւն կը զգացուի: Ասանք վաճառական վրա քիչ ներքեր կը խօսեմք: Այս է ասան մայր ուսումնարանի վիճակը: Կօրօսո, խալիկէ և Կործու թաղերի ուսումնարաններ կուսուցանեն նոյնպէս տիրացուներ, որոնց մէջ կը հաւաքուին ընդհանրապէս ամբողջ 150 մանչ երեխաներ: Արդուինի մայր ուսումնարանի ուսուցիչներն ուճիկի մի մասն ուսումնարանի եղբայրութեան արկղը կը վճարէ, իսկ միւս մասին և թաղի զարդերներն աշակերտների ծնողը, ամբողջ մի երեխայի համար 10—50 կոպեկէ: Արդուինի ուսումնարաններ և եկեղեցիք, քարաշէն են, մասնաւոր մայր եկեղեցին լաւ շէնք և քովն ալ նորաշէն փառաւոր դանդաղատուն ունի: Միայն Կօրօսո թաղի թէ եկեղեցին և թէ ուսումնարանի շէնքերն խալիկու են: Սակայն եկեղեցին նոր և քարաշէն կը շինուի, որու համար գեր. եպ. փոխանորդ հայրն բաւականի գումար հաւաքած է ժողովրդէն:

բ) Արդանուշի մէջ կայ 170 տուն կամ 900 հայ-կաթոլիկ, որոնք ունեն մի քարաշէն եկեղեցի և մի փայտաշէն դպրատուն: Գարատան վրայի յարկի սենեակներն քահանայներն է յատկացրած, իսկ վարի յարկն, որ ճիշդ գումար երեւոյթ ունի, կը հաւաքուին 70-ի մօտ աշակերտ: Սոցա ուսուցիչն

Մեսրոպ քահանայ Գուլումեանց 3 ռուբլի, եղբայրք Աղամալեանց 10 ռ., Ս. Հախնազարեանց 10 ռ., Յ. Մարգարեանց 5 ռ., Մ. Գասպարեանց 1 ռ., Կ. Աղանեանց 2 ռ., Ս. Գուլարեանց 5 ռ., Գ. Մնացականեանց 10 ռ., Յովհ. Մարգարեանց 10 ռ., Ա. Աղամալեանց 5 ռ., Ս. Գուլարեանց 2 ռ., Խ. Մարգարեանց 3 ռ., Ս. Գուլարեանց 3 ռ., Թ. Արտիսանեանց 5 ռ., Ս. Յակովբեանց 3 ռ., Է. Գուլարեանց 3 ռ., Մարտիրոս Տէր-Միքայէլեանց 3 ռ., Մ. Խոջամիքեանց 2 ռ., Ա. Միքայէլեանց 3 ռ., Գ. Սամարեանց 5 ռ., Գ. Աղամալեանց 2 ռ., եղբայրք Ա. Մնացականեանց 10 ռ., Ս. Արտիսանեանց 10 ռ., Յ. Հախնազարեանց 5 ռ., եղբ. Ս. Գեորգեանց 5 ռ.: Տիկնայք. Ջարուհի Գուլումեանց 1 ռ., Նազելի Մնացականեանց 3 ռ., Թադուհի Արտիսանեանց 3 ռ., Հովհաննէ Մնացականեանց 3 ռ., Փառանձեմ Մնացականեանց 3 ռ., Նինայ Հախնազարեանց 3 ռ., Մինան Արտիսանեանց 3 ռ., Մարիամ Մնացականեանց 3 ռ., Գոհար Մնացականեանց 3 ռ., Եղիսարէթ Սամարեանց 3 ռ., Ե. զիսարէթ օտարական ոմն 5 ռ., Վարդուհի Աղամալեանց 3 ռ., Գուլարեանց Աղամալեանց 3 ռ., Ջարուհի Ոսկանեանց 3 ռ.: Ընդամենը 167 ռուբլ:

Ստեփան Արտիսանեանց, Յարութիւն Մնացականեանց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Իշխան իրակու յուզարկաւորութեան հանդէսը դէպի Միտի մայր-եկեղեցին, լինելու է այսօր, չարաթ օր, ժամը 10-ին առաւօտեան, իսկ թագուր լինելու է Մցիսէթի մէջ վաղը, կիրակի օր, մայիսի 2-ին, ժամը 11-ին առաւօտեան:

Յօգուտ ուսուցչական ժողովի երկրորդ դասախօսութիւնը լինելու է երեքշաբթի օր, մայիսի 4-ին: Այն ինչ «Մշակ» անցեալ համարում, փոխանակ մայիսի 4-ին, տպված էր սխալմամբ ապրիլի 4-ին:

Մեզ գրում են ԱԿԿԵՐՄԱՆԻՅ, որ Կրիմումն է, հետեւեալը: «Հայ մանուկները, որոնք սրանից մի և կէս տարի առաջ սկսեցին մեր ծխական դպրո-

ւալ մի աշխարհական-տիրացու է: Տիրացուի ուճիկը կը վճարեն աշակերտների ծնողը տիրացուի դատողութեան համաձայն, ամբողջ մի երեխայի համար 20—40 կոպ:

դ) Սաթլի գիւղն ունի 60 տուն կամ 300 հայ-կաթոլիկ, մի եկեղեցի և մի ուսումնարան, որու մէջ կը հաւաքվին 40-ի մօտ երեխաներ: Սրանց ուսուցիչն է նոյնպէս մի տիրացու անդական քահանայի օգնականութեամբ: Միւսը կը հոգան ծրնողը:

զ) Փիլիկուր գիւղն ունի 30 տուն, միայն հայ-կաթոլիկ: Սրանք ևս ունեն մի ուսումնարան 15 երեխայ պարունակող, տիրացուի մը կառավարութեան ներքն:

ե) Մամանլիս 10 տուն միայն հայ-կաթոլիկ 10 երեխաներով և մի տիրացուով: Բայց այդ երկու դեղերն ալ ձմեռը, հաղու մի երկու երեք ամիս իրենց երեխաներին ուսումնարան կուղաւոր խրճիթը կուղարկեն: Իսկ միւս ժամանակներում, իրենց հետ միասին երկրագործութեամբ կը պաշտպանեն:

զ) Կարս քաղաքի մէջ ալ հայ-կաթոլիկներն, որոնք փոփոխակի կաւաքներ և կը սակսին, վասն զի մեծամասը օտարաբաղադրացի են առանց գերդաստանի, ոմանք ալ գերդաստանով, ունէին մի զարդի սենեակ ուր կը հաւաքուին 20-ի մօտ երեխաներ: Սակայն հիմայ, ծնողներ, զարդի անկարգութիւնն տեսնելով, իրենց երեխաներ սկսել են սկսական և ազգային լուսաւորական բարեկարգված ուսումնարաններ ուղարկել:

Ահա սոքա են նոր գրաւած նահանգների մէջ

Մի ջի փոշոց, Կաթօլիչէսկայա փողոցի աւելիւն № 13